

ՊԱՇՏՈՆ**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ****ԱՇԽԱՏԱՆ****ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ****ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ****ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ****ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ**

Վարձատրվող ուսուցում կորպորատիվ վաճառքների
վարչությունում
Լրիվ դրույք
ք. Երևան, ՀՀ
Հնարավորինս շուտ
28/11/2022թ.
16/12/2022թ.
3-6 ամիս, հետագա աշխատանքի հնարավորությամբ

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն ընձեռում է հնարավորություն ավարտական կուրսի կամ նորավարտ ուսանողներն՝ մասնակցելու վարձատրվող ուսուցման ծրագրին, բանկային ոլորտում կորպորատիվ վաճառքների վարչությունում համապատասխան փորձի ձեռքբերման և հետագայում Բանկում աշխատելու նպատակով:

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՈՒՍՈՒՑԱՆՎԻ ԵՎ ՊՐԱԿՏԻԿ ՓՈՐՁԱՌՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ:

1. ՀՀ ռեզիդենտ և ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ հաճախորդների ներգրավվում, Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:
2. Ներգրավման նպատակով հաճախորդների հետ բանկի տարածքում և բանկի տարածքից դուրս հանդիպումների, այցելությունների իրականացում:
3. Առկա ՀՀ ռեզիդենտ և ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հաճախորդների սպասարկում:
4. Հաճախորդից բոլոր պրոդուկտներից ստացվելիք եկամտաբերության հաշվարկի, և արտոնյալ պայմանների հաստատման գործընթացի իրականացում:
5. Հաճախորդների մոնիթորինգների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում և մոնիթորինգի իրականացում:
6. Տեղեկատվական բազաների և թղթապանակների վարում:
7. Հաճախորդների հետ համապատասխան պայմանագրերի և համաձայնագրերի կազմման և կնքման պրոցեսների կազմակերպում:
8. Քարտային օվերդրաֆտերի, վճարային համակարգերի (ՊՈՍ տերմինալների), Rocket line 0 և այլ կորպորատիվ պրոդուկտների վաճառքների իրականացում:

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Ունենալ տնտեսագիտական/ֆինանսական մասնագիտացում,
- Տիրապետել ռուսերեն և անգլերեն լեզուների,
- Ունենալ հաղորդակցման գերազանց հմտություններ,
- Ունենալ բանակցելու և վաճառքի հմտություններ,
- Լինել նախաձեռնող, նորարար գաղափարներով և էնտուզիազմով լի:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման ավարտին առկա է նաև Բանկում աշխատանքը շարունակելու հեռանկար:

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարզևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե հետաքրքրված ենք Բանկի կորպորատիվ վաճառքների վարչությունում կարիերան սկսելու և հմտանալու և հետաքրքրված եք միանալու ԱյԴԻ Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴԻ Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴԻ Բանկ» ՓԲԸ անվանումով: «ԱյԴԻ Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ <https://www.idbank.am/>: